



1.5. Ուռենիների կտրոնների բողբոջների դիրքը, տնկումը

Կտրոնները տնկվում են անմիջապես փափուկ հողի մեջ խրելու մեթոդով կամ, եթե հողը համեմատաբար ամուր է ու քարքարոտ՝ մետաղյա ձողերով անցքեր բացելու և կտրոնն այնտեղ տեղադրելու միջոցով (Նկար 10-13): Կտրոնները պետք է տնկվեն աճման ուղղությամբ դեպի վեր՝ երկու երրորդով հողի մեջ և մեկ երրորդով հողից դուրս, այնպես, որ 2 աչքաբողբոջ մասն վերևում (Կառավարության 2020թ. N 749-լ որոշում): Կտրոնները կարելի է տնկել ուղղահայաց կամ թեքությամբ՝ 50-70° անկյան տակ (Նկար 10, 11):




Նկար 10. Կտրոնների տնկման ձևերը (ուղղահայաց)




Նկար 11. Կտրոնների տնկման ձևերը (թեքությամբ)

Փափուկ հողերում կտրոնները մեկ հարվածով խրվում են գրունտի մեջ կամ հատուկ խողովակի միջոցով հասցվում անհրաժեշտ խորության (Նկար 12, ա-դ):



Նկար 12. Փափուկ հողերում տնկումը մետաղյա խողովակի միջոցով (ա. մետաղյա խողովակը բռնակով; բ. խողովակը և ուռենու կտրոնը; գ. կտրոնի մեկ երրորդի տեղադրումը խողովակի մեջ; դ. կտրոնի տնկումը)

Ամուր հողերում կտրոնները տնկվում են հատուկ պատրաստված ձողերի միջոցով (Նկար 13, ա): Յողի մեջ անցք է բացվում՝ ձողը գետնին հարվածելու և ոտնակով խորացվելու միջոցով: Կտրոնը տեղադրվում է անցքում, այնուհետև ձողի միջոցով անցքի կողքից հողը սեղմվում է կտրոնի ուղղությամբ և ոտքերով ամրացվում այնպես, որ անցքի մեջ դատարկ տեղ չմնա (Նկար 13, ա-դ):



Նկար 13. Ամուր հողերում տնկումը մետաղյա ձողի միջոցով (ա. մետաղյա ձողը բռնակով և ոտնակով; բ. փոսի փորումը ձողով; գ. կտրոնի տեղադրումը փոսի մեջ; դ. հողի սեղմումը կողքից դեպի փոսը)


«ԳԵՏԵՐԻ ԱՓԱՄԵՐՁ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ԶԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՏՆԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԶԱՄԱՌՈՏ ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. ՏՆԿՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ, ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ՍԽԵՄԱՆԵՐԸ

1.1. Ուռենիների կտրոնների հավաքը, նախապատրաստումը

Ուռենիների կտրոնները վերցվում են անմիջապես տնկումներից առաջ: Կտրոնների մեծ մասը վերցվում են համանուն գետերի հովիտներից, կամ նույն գետերի գետաբերանային հատվածներից, որտեղ ուռենիների բուսուտները լիովին բավարարում են պահանջվող քանակները: Կտրոնները սկզբից հավաքվում են ճյուղերով, ապա կապվում են խրճերով՝ յուրաքանչյուրը՝ մինչև 50 հատ: ճյուղերը պետք է լինեն փայտացած, ըստ երկարության 50-ից 210 սմ, հիմքերում կարող են ունենալ 0.8-3.0 սմ տրամագիծ (Նկար 1):

Այս ճյուղերից կտրվում են համապատասխան երկարության կտրոնները, փաթեթավորվում 50-100-ական հատ և տեղափոխվում տնկման վայրը (Նկար 2): Կտրոնները պետք է ունենան 25-40 սմ (Կառավարության 2020թ. N 749-լ որոշում), իսկ երկար միջհանգույցներ ունեցող ընձյուղների դեպքում՝ մինչև 50 սմ երկարություն և 0.8-2(3) սմ տրամագիծ, ունենան առնվազն 4-5 աչքաբողբոջ (Նկար 2):



Նկար 1. 50-ից 210 սմ երկարության ճյուղերի խուրճը



Նկար 2. 40 սմ երկարության կտրոնների խուրճը

1.2. Ուռենիների՝ տնկման համար նախատեսված տեսակները

Քանի որ ուռենիների որոշ տեսակներ դժվարությամբ են արմատակալվում կտրոններով (Նկար 7-8), անհրաժեշտ է տարբերել դրանք բնության մեջ և կտրոններ վերցնել միայն հեշտ արմատակալվող տեսակներից (Նկար 3-6): Տնկումների համար նախատեսված տեսակները տարբերվում են ոչ ցանկալի, դժվար արմատակալվող տեսակներից ճյուղերի և ընձյուղների բարակությամբ և բողբոջների փոքրությամբ:

Նկար 3 և 4-ում համեմատության համար պատկերված են տնկումների համար առաջարկված տեսակների վեգետատիվ (առանց ծաղկային բողբոջների) ընձյուղները, որոնք նկատելիորեն բարակ են նկար 7-ում պատկերված, տնկումների համար ոչ ցանկալի Այծուռենի տեսակի վեգետատիվ ընձյուղից:



Նկար 3. Տնկումների համար առաջարկված Ուռենի եռառէջ (Salix trinadra) տեսակի վեգետատիվ ընձյուղը



Նկար 4. Տնկումների համար առաջարկված Ուռենի էլբուրսի (Salix elbursensis) տեսակի վեգետատիվ ընձյուղը



Նկար 5. Տնկումների համար առաջարկված Ուռենի էլբուրսի (Salix elbursensis) տեսակի գեներատիվ ընձյուղը



Նկար 6. Տնկումների համար առաջարկված Ուռենի հայ-ռուսական (Salix armeno-rossica) տեսակի գեներատիվ ընձյուղը

Նկար 5 և 6-ում պատկերված են տնկումների համար առաջարկված տեսակների գեներատիվ կամ ծաղկող ընձյուղները, որոնք նկատելիորեն բարակ են, իսկ բողբոջները նկատելիորեն փոքր են:

1.3. Ուռենիների՝ տնկման համար անընդունելի տեսակները



Նկար 7. Տնկումների համար ոչ ցանկալի Այծուռենի (Salix caprea) տեսակի վեգետատիվ ընձյուղը



Նկար 8. Տնկումների համար ոչ ցանկալի Այծուռենի (Salix caprea) տեսակի գեներատիվ ընձյուղը

1.4. Ուռենիների վարակվածությունը

Ուռենիների կտրոնները մթերելու ընթացքում հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել վարակված և հիվանդ ճյուղերին (Նկար 9), ընտրելով միայն առողջ ճյուղեր:



ա.



բ.

Նկար 9 ա, բ. Ուռենու վարակված ճյուղերը Ուռենու վահանակի (Chionaspis salicis) տեսակի միջատով